«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի
անվան պետական համալսարան»
հիմնադրամի

Դեկտեմբերի 28.11.2023թ. թիվ 1303 Ն/Մ հրամանի

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2023-2025թթ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունված է ՎՊՀ գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 6 23.11.2023թ.

ՎԱՆԱՁՈՐ

2023

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ավելի քան կեսդարյա ուսումնամանկավարժական և գիտահետազոտական գործունեության փորձը Համալասարանին թույլ է տալիս արձանգանքել ժամանակի մարտահրավերներին՝ որպես կարևորագույն քայլ դիտարկելով կրթության և գիտության ոլորտում հասարակության համապատասխան ռեսուրսների ու կառույցների համախմբումը:

Համալսարանի գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) ամրագրում է 2023-2025 թվականներին գիտության ոլորտի հեռանկարային զարգացմանն ուղղված քաղաքականությունը: Ռազմավարությունը Համալսարանի գիտության ոլորտի ներկա վիճակի, առկա հիմնախնդիրների, տեսլականի և առաքելության, հեռանկարային զարգացման նպատակների և ուղղությունների վերաբերյալ դրույթների ամրողջություն է:

Համալսարանը կարևորում է հիմնարար և կիրառական հետազոտությունների պլանավորումը և իրականացումը: Համալսարանի ֆակուլտետների կառուցվածքային ուսումնագիտական հիմնական ստորաբաժանումները՝ ամբիոնները, ունեն գիտահետազոտական թեմաներ՝ երկարաժամկետ պլանավորմամբ: Համալսարանը կարևորում է նաև գիտահետազոտական գործունեության ծավալումը միջազգային ասպարեզում, ընդ որում՝ ոչ միայն գիտաժողովների մասնակցությամբ, այլև համատեղ ծրագրերի իրականացմամբ: Հաշվի առնելով վերոնշյալ նպատակները՝ անհրաժեշտ է՝

- կատարելագործել գիտահետազոտական աշխատանքներին դասախոսների և ուսանողների ներգրավման մեխանիզմները,
- ներդնել միջազգային մակարդակով հետազոտական գործունեության խթանման մեխանիզմներ՝ շեշտադրելով համատեղ ծրագրերի իրականացումը,
- բարելավել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները,
- խթանել միջճյուղային հետազոտությունները,
- կատարելագործել միջբուհական համագործակցության քաղաքականությունը,
- զարգացնել Համալսարանի գիտելիքահեն նորարարության ձեռնարկատիրական գործունեությունը:

Համալսարանի գիտության զարգացման 2023-2025 թվականների գերակայություններն են.

1) Հայագիտություն

Հայագիտության զարգացումը կարևորագույն ռազմավարական ուղղություններից մեկն է՝ նպատակաուղղված հայ ժողովրդի ինքնության ամրապնդմանը, քաղաքակրթական արժեքների և պատմամշակութային ժառանգության պաշտպանությանն ու հանրահռչակմանը: Այս գերակայության շրջանակում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնարար ուղղությունների, ինչպիսիք են, լեզվաբանությունը, գրականագիտությունը, հայ ժողովրդի պատմությանը, պատմամշակութային ժառանգությանը նվիրված ուսումնասիրությունները, հայագիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացումը, աշխարհի հայագիտական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնումը:

2) Գիտություններ կյանքի և առողջության մասին

Կյանքի մասին գիտությունների զարգացումն ունի սկզբունքային նշանակություն կյանքի տևողության և նրա որակի բարելավման ուղղությամբ իրականացվող հետազոտությունների ոլորտում: Բացի այդ, կյանքի մասին գիտությունները (կենսաբանություն, դեղագործությունը և այլն) կարող են հզոր ազդակ հանդիսանալ տնտեսության մի շարք ճյուղերի զարգացման համար:

Որպես գերակա գործոն՝ առանձնակի կկարևորվեն առողջ ապրելակերպի տարածմանը նպատակաուղղված հետազոտությունները: Գերակայությունում իրենց կարևորագույն տեղն ու դերակատարումը կունենան մարդու առողջության վրա տարաբնույթ գործոնների ազդեցությանն ուղղված հիմնարար և կիրառական միջճյուղային հետազոտությունները:

3) Նորագույն արդյունավետ տեխնոլոգիաներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, այդ թվում՝ արհեստական բանականության օգտագործմամբ տեխնոլոգիաներ

Տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակներում կկարևորվեն այնպիսի հիմնական ուղղություններ, ինչպիսիք են ծառայությունների զարգացմանը նվիրված ուսումնասիրությունները և լուծումների մշակումը, մեծածավալ տվյալների

օգտագործմամբ օպտիմալացման խնդիրների վերլուծությունը և լուծումը, գիտական, գիտատեխնիկական, տնտեսական և հասարակական մարտահրավերների լուծմանն ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում արհեստական բանականության և ամպային տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների հետազոտումը:

4) Տնտեսության և հասարակության զարգացման կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված հիմնարար և կիրառական հետազոտություններ

Այս գերակայության շրջանակներում կարևոր է զարգացնել բնական գիտությունների ուղղությամբ հետազոտությունները, ստեղծել և նպաստել հիմնարար, կիրառական հետազոտությունների և նորարական գործընթացների միջև փոխադարձ կապերի ձևավորմանը և զարգացմանը: Դա կխթանի Համալսարանի գիտական ներուժի զարգացումը, երիտասարդ հետազոտողների պատրաստմանը նպաստող ռազմավարական քայլերի շարունակական իրագործումը:

Կարևորվում են նաև հումանիտար և հասարակական գիտությունների զարգացմանն ուղղված շարունակական ուսումնասիրությունները, այդ թվում՝ միջմշակույթային հաղորդակցության ոլորտում կատարվող աշխատանքները: